# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-34
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** «06». «08». **2025թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության տնօրենի պաշտոնակատար Ա.Բաբայանի, հիմք ընդունելով 31.01.2025 թվականին կնքված **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-34** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-34** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **7 308 000** (յոթ միլիոն երեք հարյուր ութ հազար) ՀՀ դրամ գումարին ավելացնել **25 000 000** (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի **32 308 000** (երեսուներկու միլիոն երեք հարյուր ութ հազար) ՀՀ դրամ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցե՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ստանդարտացման և
չափագիտության Ազգային
մարմին»ՓԲԸ
Հասցեն. Ք. Երևան, Կոմիտաս 49/4,
ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 00219641
Հեռ. 010 23 26 00 /137/
Էլ. հասցե՝
gnumner@armstandard.am

Ա.Բաբայան
/Տնօրենի պաշտոնակատար/
(ստորագրություն)

*Հավելված N 1*
*<<06>> 08 2025թ.*
*ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-34 ծածկագրով գնման պայմանագրի*

### Վճարման ժամանակացույց

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71631110/1 | Սարքերի ստուգման ծառայություններ | | | | | | | | 12 500 000 | 12 500 000 | 25 000 000 | 25 000 000 | 25 000 000 | **25 000 000** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011042471**
**ՀՎՀՀ 02882913**
**Հեռ. 010 59-61-52**
**Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**

**___________ Ա. Ֆիդանյան**
**/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**«Ստանդարտացման և չափագիտության Ազգային մարմին»ՓԲԸ**
**Հասցեն. Ք. Երևան, Կոմիտաս 49/4,**
**ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ**
**Հ/Հ 1150012490810100**
**ՀՎՀՀ 00219641**
**Հեռ. 010 23 26 00 /137/**
**Էլ. հասցեն gnumner@armstandard.am**

**___________ Ա. Բաբայան**
**Տնօրենի պաշտոնակատար/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**